



ԳԱՂՈՒԹԱՅԱՅ ԿՅԱՆՔ

ՇՆՈՐՀԱԿԱԼԿԱՆ ՇԵՈՒԳԻՐ

ՄՈՍԿՎԱ-ԿՐԵՄԼ

Հայ ժողովրդի լավագույն բարեկամ

ՄԵԾ ԱՏԱԼԻՆԻՆ

Ձեր նախաձեռնություններով, Սովետական Կառավարության ընդունած պատմական որոշումը Սփյուռքի հայությունը իր Հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադարձնելու առթիվ, Իրանում ապրող հայերի կողմից ընդունվեց մեծ խանդավառությամբ և ըստեղծեց հայրենասիրական աննախընթաց մի վերելք:

Սովետական Կառավարության այդ վճիռը բացեց հայ ժողովրդի պատմության մեջ մի նոր և փայլուն էջ: Առաջին անգամ Սովետական իշխանության օրոք սկսեցին իրագործվել հայ ժողովրդի դարավոր իղձերը, ամբողջ աշխարհում ցրված հայերի միացումը իրենց Մայր Հայրենիքում, Սովետական Հայաստանում:

Այդ պատմական ակտի իրագործման համար, հայերի ներգաղթի Օժանդակ Կեդրոնական Կոմիտեն, Իրանի հայկական առաջադեմ բազմաթիվ կազմակերպությունների աջակցությամբ, ձեռնարկեց հայերի ուղևորմանը դեպի Սովետական Հայաստան:

1946 թվի հուլիսի 14-ից մինչև հոկտեմ-

բեր 20-ը Սովետական Հայաստան են ուղևորվել 20,700 հայեր:

Հայերի ներգաղթի առաջին տարվա աշխատանքների ավարտման կապակցությամբ Իրանի ներգաղթին Օժանդակող Կեդրոնական Կոմիտեն իր անկեղծ շնորհակալությունն է հայտնում Ձեզ, հայ ժողովրդի ազատագրող Մեծ Ստալինին:

Իրանի հայերը երբեք չեն մոռանա Ձեր հոգատար խնամքը սփյուռքի հայության վերաբերմամբ, որոնք երկար թափառումներից հետո Ձեր հանձարի շնորհիվ վարելիություն ստացան վերադառնալ իրենց Հայրենի երկիրը և լծակցվել իրենց փառահեղ հայրենիքի, Սովետական Հայաստանի մեծ շինարարությանը:

Իրանի ներգաղթին Օժանդակող Կեդրոնական Կոմիտեն հավաստիացնում է Ձեզ, սիրելի Իոսիֆ Վիսսարիոնովիչ, որ նա կլարի իր բոլոր ձիգերը ավելի ևս հաջողությամբ կազմակերպելու համար 1947 թվին հայերի ներգաղթը դեպի Սովետական Հայաստան:

Նախագահ՝ ՌՈՄԱՆ ԻՍԱԵՎ

(«Վերածնունդ» թիվ 246, 1946 թ.)

ԺՈՂՈՎ ԲՐՅՈՒՍՍԵԼՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 26-ՐԴ ՏԱՐԵԿԱՐՁԻ ԱՌԹԻՎ

ԲՐՅՈՒՍՍԵԼ — 11 դեկտեմբերի (ՏԱՍՍ) — Բելժ գործակալությունը հաղորդում է. Հայաստանի Սովետական Մոցիստիստական Ռեպուբլիկայի 26-րդ տարեդարձը՝ դեկտեմբերի 7-ին նշվեց Բրյուսսելի Գեղարվեստի պալատում կայացած ժողովով, որին ներկա էր Սովետական Միության դեսպան Պավլովը:

Ճառերով հանդես եկան Սովետական Հայաստանի բարեկամների ընկերության նախագահ Մուրադյանը, Ֆրանսիայի հայ ազգային ճակատի պիտավոր քարտուղար Ասատուրյանը, Բրյուսսելի համալսարանի ռեկտոր պրոֆեսոր Վան Դեն Դունգենը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎ Ի ՆՊԱՍՏ ՆԵՐԳԱՂՔԻ ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ՏՈՒՐԻ

Հ. Բ. Ը. Միութեան Մեծագույն Նյու-Յորքի և Շրջակայքի Ներգաղթի Հանգանակիչ Հանձնախումբի կողմն սարքված էր հրապարակային համազգային ժողով մը որ տեղի ունեցավ սեպտեմբեր 29-ին, Քատուն Հոլի մեջ:

Ժողովը բացվեցավ Տիրալը Սրբազանի մաղթանքով:

Տ. Տ. Տոնելլան ներկայացուց Հանգանակութեան Կեդր. Հանձնախումբի նախագահ Տ. Լ. Կերտանը, որը շեշտեց հանգանակութեան կարևորութիւնը:

Հ. Բ. Ը. Միութեան Կեդր. Վարչութեան նախագահ Տ. Արշակ Գարակեռզյան ուղերձով մը շեշտեց Ներգաղթի հանգանակութեան կարևորութիւնը, երախտագիտութիւն հայտնեց և. Հայաստանի կառավարութեան, որ իր դռները բացավ վաղթական հայերու առջև և հաղորդեց թե Վարչութիւնը առանց հանգանակութեան արդիւնքին սպասելու, ամբի կիս կես միջոցն տուար հատկացուցիր է նպատակին:

Հ. Բ. Ը. Միութեան Վարիչ-Պատվիրակ Տ. Վահան Մալեզյան դարձյալ շեշտելով քանիցս կրկնած իր դավանանքը, թե հայոց համար «արտաքո Հայաստանի չիք փրկութիւն», հարեց թե դարերի ի վեր ավագ կարևորութիւն ունեցած է ցեղային գոյութեան հարցը, և թե՛ մեր ազգը, հակառակ թշնամիներե շրջապատված, հալածված ըլլալուն և արսորական դառնալուն՝ ապրած է, շնորհիվ իր ինքնապահպանման բնազդին, շնորհիվ երեք գլխավոր ազդակներու, — նախ՝ Հայ եկեղեցին, երկրորդ՝ հայ լեզուն, և այժմ ալ՝ հայ հայրենիքը:

«I Ask You, Ladies and Gentlemen»-ի և «Լույս Զոարթ» քերթողութեանց հեղինակ Տ. Լևոն Զավեն Սյուրմելլան (առաջինը հաստատուն համբավ մը ապահովեց իրեն ամերիկյան բանիմաց լայն շրջանակի մեջ, իսկ երկրորդը, որ 1924-ին հրատարակված

իր հայերեն քերթվածներու հավաքածուն է, գուրգուրալիք հիացում ապահովուած էր իրեն հայ գրական շրջանակներու մեջ) նախանգերեն և հետո հայերեն ուղերձով մը հայտնեց, թե ինք մեկ ներկայացուցիչն է այն սերունդին, որ ետ չի դարձավ մահվան արահետեն. ինք կորսնցած ըլլալով հայր, մայր, ընտանեկան պարագան՝ միջանհուն բերկրութեամբ լեցվեցավ, իր, իրուս գինվորներ գրավեցին Տրապիզոնն, մոտակա գյուղը, որ իր թագատարանն սրած էր, և ինք լսեց այն քաղցր ձայնը, որ կրսեր. « ազգը քեզի հոգ պիտի տանի. այդ օրն ա-նիկա զգաց՝ թե ինք առանձինն չէ ալլևա, թե ինք որք չէ ալլևա, այլ մաս կկազմե այն մեծ ընտանիքին, որ ծանոթ է հայ ազգ անվամբ:

Տ. Սյուրմելլան հուսեց գովքը հայ ազգին, որ մղած է Վարդանանց պատերազմը ընդդեմ կրակապաշտ պարսից ու դարերու ընդմիջեն շարունակած է իր գոյութիւնը դարգացնելով իր գրականութիւնը, իր լեզուն և արտաբերելով իր ուրույն մշակութիւնը:

Տ. Սյուրմելլան իրավամբ դիտել տվալ, թե մենք ամբի կ պետք ունինք Հայաստանի, քան թե Հայաստան մեզի և շեշտեց թե լավ ամերիկացիներ ըլլալու համար լավ հայեր պետք է ըլլալ նախ: Անիկա տալը նկատեց երջանակութեան աղբյուր ու ներգաղթի գովքն ընելով, յուրաքանչյուր վաղթական նկատեց ծառ մը՝ որ կրնա իր շուքը տարածել հողնած, պարտասած ճամբորդին վրա: Այս ծանորը համախմբվելով կրնան դալարագեղ պարտեց մը հառաջ բերել: Այս առնչութեամբ Սյուրմելլան կարգաց իր քերթվածներեն մեկ քանին, որոնցմե մեկ երկու համարներ կբերենք, ցույց տալու համար թե ի՞նչ ազդու տպավորութիւն թողուցին անոնք իրենց վճիտ հայերենով, դաշնավորութեամբ ու խորունկ իմաստով:

Կր փնտրենմ երգերով իմ տունը՝ ա՛յ հիշատակ,
Մինչ կաղաթի օրե օր իր պատկերը մտերիմ...
Իմ տունը երգ մ' է որուն բառերը այն շունիմ...
Իմ տունը յա՛ր մ' է անուշ գոր կը սիրեմ միս մինակ...

Այսպէս հանդարտ կուգամ մա՛ն Լուսավորչի Աստղին տակ
Եվ մեղրածոր անոր լույսն հոգիիս մեջ կը կարե...
Սատեղազարդ երկինքն է մեծ երգեհոն մ' արծաթե...
Զյունին վրա կը քափի լուսնակին լույսն սպիտակ...

Հիմա անձայն կը բալեն ոգիներն իմ պապերուն
 Սևանին շուրջ փառավոր... Սևանն հերդեն է կապոյտ՝
 կամարներու տակ ներմակ... Սևանը պար է անփոյր՝
 Աղջիկներու հագանո՛ղ, խորհրդավոր, մոլորուն...:

■ * * * * *

Մառ մըն եմ ես
 Արևուն տակ Հայաստանի
 շանանշագեղ ու լայն բացված.
 Հսկերս ամուր՝
 րու պես
 Եւ պլլրվին մեր սուրբ հողին
 Խաչքարերուն,
 Ու քեներս բաց հովերուն՝
 Ես Հիսուսին պես կը կանգնիմ
 Ներան վրա...

Ամեն գիշեր,
 Այգիներուն մեջ լուսահամ՝
 Նագենըկուն ու գյուղական
 Սիրողները փաղի կերբան...
 Մեն մի կաթիլն
 Արցունքներուն մեր խեղճ մորկանց՝
 Հիմա հատիկ մ՝ է խաղողի
 Նուրբ, րափանցիկ ու լուսնահամ...:

Տ. Սյուրմեղյան մերջացուց իր խոսքը՝
 մաղթելով տր հայ մայրերու արցունքը կա-
 րելի ըլլա վերածել լուսնահամ խաղողի
 հատիկներու:

Հայրենակցական Միություններու կողմէ
 Տ. Ճ. Հովսեփյան շնորհատրեց միասնա-
 կանությունը, որ այժմ գոյացած է Հայրե-
 նակցականներու և Հ. Բ. Ը. Միության մի-
 ֆն:

Տ. Ա. Սարոյան ներգաղթի հանգանա-
 կությունը որակեց երջանկության հանգա-
 նակություն, քանի որ անիկա կոչված է եր-
 ջանակացնելու շատ մը գաղթական հայեր,
 որոնք պիտի երթան ծաղկեցնելու Խ. Հա-

յաստանը: Ուղեբձեն հետո Տ. Սարոյան
 վարեց հանգանակությունը:

Հայ ժողովրդական երգերու հաջողագույն
 մեկնարան և բարձրորակ ձայնով օժտված
 երգիչ Տ. Հակոբ Ասատուրյան երգեց Ռաչ-
 պարի երգը, Պրճիկո (Կանանչյան) և Հա-
 յաստան:

Ներկայացվեցավ Կաթողիկոսական ընտ-
 րության և օժման շարժապատկերը:

Վեր. Ա. Ա. Պետիկյանի մաղթանքով
 փակվեցավ հանդեսը:

Հ. Ա.

(«Հայաստանի կոչնակ» թիվ 41, 1946 թ.)

„ՁԵՁԻ ԿՀԱՐՑՆԵՄ, ՏԻԿԻՆՆԵՐ ԵՎ ՊԱՐՈՆՆԵՐ“
 „I ASK YOU, LADIES AND GENTLEMEN“

Կուղեմ կարողալ Զավեն Սյուրմեղյանի գիր-
 քը, „I Ask You, Ladies and Gentlemen“ բայց
 չեմ համարձակիր, վախնալով թե կրկին պի-
 տի արյունին վերքերս, կրկին սարսափելի
 պատկերներու դիմաց պիտի գտնեմ ինքը-
 դինքս: Արդեն անգեր եմ ջարդերու մեջն ու
 լսեր եմ շատ մը ջարդերու պատմություն-
 ներ: Հազարավոր մանուկներու կյանքին
 հետ հաղորդակցության փեղ եմ ու գիտեմ
 թե ինչ դրախտալի՞ն ընտանիքներ մեկ օրն
 մյուսը փհհնային կյանքի մատնված են:
 Բայց բարեկամուհիներես մեկուն թելա-
 դրության համաձայն և իբր շատ զնահա-
 տուած գիրք մը կ'մտադրեմ անոր քանի մը
 էջերը կարողալ գտնել և հետո տրոշել թե պիտի
 կարենա՞մ դիմանալ ի տես այդ պատկերնե-
 րուն թե ոչ:
 Առաջին էջերին կ'զրապուրվիմ արդեն և
 մինչև ուշ գիշեր ձեռքես չեմ ուզեր ձգել:

Այդ Սյուրմեղյանի կյանքի պատմությունը չէ
 միայն, հապա նաև իր ազգին շատ մը մա-
 նուկներուն և պատանիներուն կյանքին
 պատմությունը կարմիր արյունով գրված:
 Այդ փիշեր մեկ մղձավանջն մյուսը կտար-
 վիմ, ու քնացած ատենս ցնցումներ կունե-
 նամ թեև, բայց մյուս օրն իսկ նույն եռան-
 դով կ'շարունակեմ կարողալ, որովհետև տխուր
 ու ահուկի պատկերներ զավեշտներով և բա-
 նաստեղծություններով համեմված են: Ա-
 նոնք շատ կ'մանին այն դառն դեղահատնե-
 րուն, որոնք շաքարի խավով մը պատած են:
 Առաջին գլխուն մեջ հեղինակը կ'գտնենք իր
 մտքերը մահվան անկողնույն քոյ: Մանուկ
 հոգի մը կ'ենաց և մահվան դեմ դիմաց: Ա-
 նոր մանկական հոգին կը մրտատանա, չի տ-
 դեր մեռնիլ և վխորհի աչքերը բաց պահելով
 սարիլ: Աչքերը բաց պահելով իսկապես
 կապրի, հակառակ թրքական խժժություն-

ներուն և այս գրքի միջոցով կայրեցնեն զեթիր կյանքի հիշատակները:

Այլագ հինգըստքիի ձևոված գլուխը նկարագրութունն է հայկական գեղեցիկ եկեղեցիի մը, որ մզկիթի և բաղնիքի մը վերածված է: Այդ գլխուն երկրորդ մասը կներկայացնեն հայկական եկեղեցիի մեջ կատարված ճարտար գրչին տակ այդ բոլոր պատկերները կենդանութուն առած են կարծես: Զավեշտական մասը կկազմեն քահանային Զավենի ոտքերը լվալու պարագան—երբ քահանան կըսե «Համբուրե անցիր, համբուրե անցիր»: Ինք կխորհի թե պետք է բուն իսկ իր ոտքերը համբուրե: Շատ մը անհաջող փորձերն հետո, ժողովուրդին ծաղրանքին կենթարկվի: Մինչև որ քահանան խոժոռոդեմ կրկին կըսե իրեն, «եսաչը համբուրե, իսաչը»:

Թուրք խաղընկերներս վերնագրով գլուխը իսկական հոգեբանութունն է թուրք մանուկներու, որոնք մանրամասն են իրենց ծնողաց: Անոնք կցուցադրեն նույն կեղծ բարեկամութունը և կյանքուրի հանդեպ ունեցած անարգանքը և շողոքորթությամբ քծնիրը, երբ հայը կեղեքել կաշխատին:

Անշուշտ ամեն գլուխ նկատի առնելու համար, պետք պիտի ըլլար այդ մասին ուրիշ գիրք մը ևս գրել: Հետևաբար զանց կառնեմ ակամա շատ մը կետեր, զորս կարծեր ի հայտ բերել:

Մահվան ուղիին վրա վերնագրով գլուխը պատմութունն է քաղաքակիրթ և քրիստոնյա ազգի մը խաչելության և մարտիրոսության—պաշարը խավարին և լուսի:

Սյուրմեկյանի մեծ հայրը սպաննուած էր մեծ ջարդին իր մորեղբայրը՝ Լևոն թուրքերը խեղդած էին քար մը կարխելով իր վզին և ծովամուռն ընելով զայն: Երկու մեծ մայրիկներ թունավորելով մեռցուցած էին, իսկ հայրն ու մայրը աքսորի մեջ սպաննուած: Ազատված էին երկու քուրթերը նախ թուրք տուներու և հետո հուլի տուներու մեջ պահվորտելով: Ինչպես նաև իր եղբայրը՝ Օննիկ մեռած չէր:

Ո՛ւր ծեծած էի վերնագրով գլուխը ամենն հուզիչ տեսարաններն մեկն է, զոր բանաստեղծը կներկայացնե: Դատարկ տուն մը,— երբեմնի դրախտավայրը, ուր տխրատեղիի մը պես Սյուրմեկյան այցելության կերթա: Իր խոտքերեն մաս մը թերևս ավելի լավ թարգմանը պիտի ըլլար իր զգացումներուն,— «Կաղոթեի, որ Աստված հաճեր հրաշք մը կատարել, և կարենայի մայրս գտնել տանը մեջ...»:

«Եսնիթի պես փողոց վազեցի և կեցա, դուռները և պատուհանները զոցված էին. փողոցը լուռ և հանդարտ, մեռած փողոցի մը նման, սիրտս կտրտփեր արագ, մեր տունը մտա, զգացի թե խոշոր գերեզմանի մը մեջ կմտնեի»:

«Միա՛ռւ, միա՛ռւ»: «Փխիկ, փխիկ», կանչեցի, գետին ցատկեց և սրունքներուս մեջտեղ կեցավ մուտավ լույս:

«Կթվեր թե կատուն ինձի կհարցներ, ու էիք այս բոլոր ժամանակը, ինչու՞ զիս մինակ թողուցիք: Ո՛հ, որչա՛փ կարոտցած եմ ձեզ»:

«Զայն բազուկներուս մեջ առնելով.— «Ես ալ քեզ կարոտցած եմ, ըսի»:

«Զէի ուզեր մեր տունը թողուլ. կուզեի համիտյան հոն բնակել»:

Միացում վերնագրով գլուխը պատկերն է այն երկնային ուրախության, երբ զիրար կորսնցուցած սիրելիներ մեկզմեկ կգտնեն դարձյալ:

«Ռուսական նավու մը վրա, կնավենք գիշերը առանց լուսի: Քանի մը քթթուն աստղեր նվաղկոտ ցուքեր կարձակեն մութ թավշյա երկինքին վրա մեռնող փոստուաներու նման»:

«Օննիկին հանդիպեցա Մետաքսատի դրան մեջ, երբ դռնն դուրս կեցեր: Երազային երևույթ մը, որ հրաշքով հանկարծ իրականության կպիտայեր...»:

«Ուրախութենես կաղտղակեմ, Նվարդ կըսե. «Աստուծո շնորհակալ ըլլանք»: Ու աչքերը վեր հառնելով ճակատը կխաշակնք»:

«Ոչ եղբայրներս և ոչ ալ քուրթերս, ոչ ալ ես, կխոսինք մեր թագուն վշտերուն վրա, կուզենք մոռնալ ձևացնել զիրար գտնելու ուրախության մեջ»:

Ուխտագնացության մը դեպի Աւարատ, — ամեն մեկ գլխու մեջ հուզիչ պատկերներ կբերե երևան, հայ տղու մը զգայուն գրիչով և կարժե դարձյալ իր գրքին քանի մը մեջբերումներ ընել:

«Լուսի ենք, պր. Քորգոմյան կըսե. «Հայկական Զվիցերլանդ, ճոխ իր պղնձի համբերով». ուսած կուրծքերով կնայինք բլուրներուն, ծառերուն, ապառաժներուն, որոնք շատ նման են ուրիշ երկիրներու մեջ եղածներուն, բայց մերը խորապես, սրբազործված և նախրագործված արյունով և արցունքներով, երգերովը և ուրախությունովը Հայաստանի»:

«Հոս այս նվիրական հողին վրա, ուր կկենանք իբր ազատ քաղաքացիներ, անոր ամեն մեկ մատնաշափը մեր նախնիքներու

ուսկորներու փոշին կպարունակէ: Այդ գլու-
ղին միջի բլուզին վրա կպառկի Սմբատ Թա-
գաւորն հայոց»:

«Նայեցեք այդ կամուրջին, փ՛նշ շքեղ հի-
շատակարան է մեր հին ճարտարագիւտու-
թեան: Հայ սերունդներ մեռած են այս վար-
կյանը երազելով, հայ հողին վրա կենալու
համար, հայ երկնքի տակ իբր ազատ քաղա-
քացիներ, ուրեմն ծնրադրենք և համբուրենք
Հայաստանի նվիրական հողը»:

«Ուստի ծնրադրեցինք և համբուրեցինք
հարգանքով»:

Հեղինակին հայրենասիրական զգացում-
ները այնքան գորավոր են, որ կրան.
«Ես աջնպես կզգամ թե մինչև իսկ մեր երկ-
րին գալիսը իբր եղբայրներ կսիրենք, ո-
րովհետև մերն են անոնք»:

Այլևս ազատ զերագույն արկածախնդրու-
րենե՛ն,— այս վերնագրով գլխուն մեջ Սյուր-
մելյան ի հւստ կրերն այն զգացումը, թե
իր գերագույն առկածախնդրութեանը վախ-
ճանին հասած է, իր աջնպան սարսափներն
և տառապանքներն հետո, երբ կհասնի իր
երազներու աշխարհը, ուր պիտի տեսնէր
կատարելագործումը իր իտեալներու: Նորեն
հեղինակն է որ կփորձէ խոսիլ:

«Միայնակ տախտակամածին վրա, կըզ-
գայի թե այլևս կյանքի գերագույն արկա-
ծախնդրութեանը լմնցուցած էի»: Նավուն
վրա հայ աղջկան մը կհանդիպի, որուն
հուշատետրին մեջ հետևյալ սրտահույզ
տողերը կգրեն—

«Հուգիս այս իրիկուն ահագին մայր եկե-
ղեցի մըն է, դատարկ, պատարագն հետո,
որուն մեջ կա իրան ճերմակ մաքուր աղ-
ջիկ մը երկար մազերով, սուրբ լույսի մը
պես փայլում: Աստված ներք ինձի, հիվանդ
ու անմեղ եմ այս գիշեր, սիրով մեռնող
վանական մը, կըղձամ հիվանդ ծաղիկներու
հոգիներուն հողմուխ մեջ, կըղձամ որ ցած-
նար լուսինը, խոշոր և տժգուն փղոսկրի
նման, կըղձալի որ պզտիկ վտակը կանգ
տոներ լուսնին ներքև, փրավորված շերա-
մի որդի մը նման: Եվ երբ մարդիկ լսեն
մահվանս լուրը, երբեք թող մեկը չի դթար
իմ վրա, ոչ մեկը մոտս թող չգար, այլ այն
երիտասարդ աղջիկը. թող ան միայն գար
շուշան մը բռնած իր ձեռքը փոխանակ վա-
ռած մոմի մը»:

Կրան Սյուրմելյան,— «ետրհնցա, թերևս
թե նորեն ծնանելու համար մեռնիլ պետք էր
նախ»:

Ամերիկան իմ արյանս մեջ,— այս վեր-
նագիրը կրող գլխուն մեջ կնկարագրեն թե
վերջապես կհաջողի իբր երկրագործական
ուսանող Ամերիկա ոտք կոխել: Այսպես

կգրեն հեղինակը. «Կարևոր բան մը պատա-
հած էր ինձի. դայն ինչպես արտահայտեց
էի գիտեր, նույն իսկ ես ինձի: Ինչ որ է,
կզգայի թե Քենսետի հողն ու արևը հոսած
էին երակներուս մեջ և հանկարծ ամերիկա-
ցի մը դարձած էի, և թե նոր ծնած էի և
ամուսնացած էի Ամերիկայի հողին հետ»:



Լ. ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ

«Այդ աժառ ես տեսա, թե ինչպես արևը
հողին հետ կսիրաբանեք Միզուրիի ձորին
մեջ, և փնչպես այդ սերեն առաջ կուգային
ուսկեղեն հատիկներու գետեր. լուսնի լույսի
լուսնայան մեջ տեսա մեղուներու այցելու-
թեանը վայրի ծաղիկներուն ստրված, և լսեցի
փայտփորիկին ձայնը: Մտիկ ըրի հացին եր-
գը երգված միլիոնավոր անտեսանելի շրթնե-
րն, մղոններով, հոտավետ դաշտերու մեջ
գիշերը»:

«Ամերիկան իմ արյանս մեջ հոսած էր.
Ամերիկայի հողը և արևը, հովն ու անձրևը,
լուսինն ու աստղերը իմ մեջս էին»:

“I Ask You, Ladies and Gentlemen”
(Չեզի կհարցնեմ, տիկիներ և պարոններ),
— սա է քսանչորրորդ գլխուն վերնա-
գիրը, որ անունն է նաև Սյուրմելյանի դըր-

քին: Այս գլուխը ամփոփումն է բոլոր դրուվանքերու: Իբր թե Նոր տարիի իրիկունն է, անցյալ տարիներու հիշատակները արթնցեր են իր մեջ և կուզե խմել, մոռնալու համար, դինիով դինովնալ կուզե իր վըշտին դինովութեննն սթափելու համար:

Կտրե Ամերիկան, անոր համար կյանքը տալու պատրաստ է, բայց անցյալը մերկապարանոց կցցվի իր դիմաց, իր սուր հիշատակներով:

«Կհարցնեմ ձեզի տիկիներ և օրիորդներ, իբր անկեղծ հայրենասեր ամերիկացի մը, մարդ ի՞նչ կըրնա ընել Նոր տարիի իրիկունը, երբ ժամանակալ Նոր տարվան իրիկունը աշխարհը պարիկներու աշխարհն էր և կյանքը այնքան սիրելի էր, որքան մահկանացու կյանք մը կարելի էր որ ըլլար...»:

«Նա խմել-չեմ սիրեր, խմելու մտի չեմ. բայց 12 ամիսը անգամ մը, Նոր տարվա իրիկունը պետք է մոռնամ անցյալը, երկար ատեններ առաջվան Նոր տարիները: Նա անկեղծ ամերիկացի մըն եմ, բայց ինչ պես մեկը կըրնա մոռնալ իր մանկութունը...»:

Յոթը ճեմակ մազեր— նյութն է վերջին դլխուն, հեղինակը կենաց և մահվան փրկստփայլության առջև է որ կգտնե ինքզինք

դարձյալ: Հիմա ալլևա մանուկ մը չէ, այլ հասուն տարիքի մեջ, ալ չկրնար խորհիլ թե աչքերը բաց պահելով կարելի է անմահանալ: Գիտե թե ուշ կամ կանուխ ձմեռն ուսառ պիտի հաչորդեն գեղազվարճ զարնան մեջ փթթող անուշաբույր ծաղիկներուն: Եվ մահվան մերձեցումը կյանքը ավելի զնահատել կսովորեցնե իրեն: Եվ կնախընտրե միշտ մանուկ մնալ կամ մանկան մը պես ըլլալ»:

«Այս առտու բաղնիքը ածիլվելու ատենս իմ աչքունքիս վրա փայլուն ճերմակ մազեր մը տեսա, և ավելի մանրակրկիտ քննությամբ ձախ քունքիս վրա վեց ուրիշներ ալ գտա և քանի մը ուրիշներ զլխուս վրա ցանված հոս հոն»:

«Գալիք սառնամանիքին առաջին աղդարաններն են ատոնք»:

«Շատ խորհեցա վրանքի և մահվան գեղեցիկ գաղտնիքին վրա...»:

«Մանկան հոգին քրքածադիկի մը պես է որ արեւին մեջ կբացվի: Աշխարհի գաղտնիքը անոր մեջ թաքնված կմնա... Քանզի մարդուն եղբայրութունը կանտարված իրողութուն մը պիտի ըլլա, երբ մենք նորեն մանուկներ դառնանք»:

ՎԱՐՍՆԵՆԻԿ ՊԵԿՅԱՆ

(«Հայաստանի կոչնակ» քիվ 5, 1946 թ.)

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՎՈՍ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՐԳԱՊՆԱԿՆԵՐՈՒ ՎՐԱ

Նյու-Յորքի Ս. Խաչ եկեղեցին գոհունակությամբ կհայտարարե, թե Հայաստանյայց եկեղեցվո Ս. Պատարագի գլխավոր երգեցողությունները երգապնակներու վրա արձանագրել տված է: Եկեղեցվո երգախումբը, ղեկավարությամբ Ներսես Ներսեայանի, երգած է Մակար Եկմալյանի, Կոմիտաս վարդապետի և Լևոն Չիլինկիրյանի բազմաձայն Պատարագի երգեցողություններեն հետևյալները.— Խորհուրդ Մեծ և Աքանչելի, Աստուածածին Անհարսնացյալ, Զանճառելի Լուսո Մայր, Մարմին Տերունական, Սուրբ Սուրբ Սուրբ, Ա:Էն և Ընդ Հոգվույդ Քում, Ամեն Հայր Սուրբ, Տեր Ողորմյա, Քրիստոս Պատարագյալ, Ով Զարմանալի, Այսօր

Զայն Հայրական, Հայր Մեր: Այս երգեցողությանց իրենց մասնակցութունը բերած են հետևյալ մենեբրդիները.— Մառի Արագյան, Շաքե Պոյաճյան, Սոնա Թեփիկյան, Հակոբ Ասատուրյան, Կոլին Ալպերյան, Եղուրդ Աթթարյան, Երվանդ Իսքենտերյան, Մարտիրոս Քեռոշյան: Երգապնակները պատրաստված են RCA—Victor Division, Radio Corp. of America-ի կողմե, և ուրախ ենք հայտնելու, որ մեքենական տեսակետեն ալ արձանագրությունները շատ հաջող եղած են: Այս երգապնակները կծախվին տասը տոլարի:

(«Հայաստանի կոչնակ» քիվ 41, 1946 թ.)

ԱՐՇԱԿ ԲԱՅՅԻՒ ՄԱՇԸ

Լոստոնի մեջ օգոստոսի 12-ին մեռած է Արշակ Բաֆի: Հուղարկավորութունը կատարված է օգոստոսի 20-ին, տեղվույն Հայոց եկեղեցվույն մեջ, ի ներկայության

բարձրաստիճան ղրկվորականներու և համալսարանական պրոֆեսորներու: Դամբանականներ խոսած են Տեր Պետրոս քհն. Գաւարճյան և Քեմպրիճի համալսարանի

պրոֆեսորներն Միս Էլիզապեթ՝ Հիւ:

Հանգուցյալին մարմինը զմրավելով զետեղված է իրենց ընտանեկան դամբարանին մեջ, Գինսել Կոլին գերեզմանատունը, ապագային փոխադրելու համար Թիֆլիզ, Բաֆֆիի գերեզմանին ջուլ:

Հանգուցյալը ծնած էր Ագուլիս, 1879-ին: 1900-ի սկզբները մորը և Արամ անվամբ եղբորը հետ միասին գացած հաստատված էր Լոնտոն և որպէս ռաուցիչ կաշտոնավարեր տեղափոխ համալսարանին կից Սլավական լեզուներու դպրոցին մեջ:

(«Հայաստանի կոչնակ» քիվ 41, 1946 թ.)

ՏՈՒՑՈՐ ԹԱՇՃՅԱՆԻ ԿՏԱԿ

«Լրաբեր»-ը հաղորդում է.—

Տորտր Վահան Թաշճյան (Լոս Անճելոս) իր ատամնաբուժական ամբողջ կազմածները կտակած է Սովետ Հայաստանի ժողովուրդին:

Կտակը, որ 10 000 տոլարի արժողութուն ունի, պիտի փոխանցվի Ռուսական Ռըլիֆի Քալիֆորնիայի Կոմիտեի միջոցով:

ՊՈՒԼԿԱՐ ՍՈՊՐԱՆԻԵԻ ՀԱՅ ԵՐԵՍՓՈՒԱՆՈՒՇԻՆ

Հայուհի մը՝ Մաքրի Խաչիկ Աբրահամյան, հոկտեմբեր 27-ի ընտրությանց ընթացքին Պուլկար Խորհրդարանի անդամ

ընտրված է: Ան ծնած է Բազարճըզ 1915-ին: («Նիքրաւ» քիվ 2793, 1946 թ.)

ՊԱՐԵԼՈՒ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

«Արաքս»-ը հաղորդում է.—

Բարիզյան «Անֆին» շաբաթաթերթը կգրէ թե Բարիզի թոնսերվատորիային կազմակերպած մրցահանդեսին մեջ պարելու առաջ-

նութունը շահած է օր. Հովհաննիսյան անուն հայուհի մը, արժանանալով մեծագույն մրցանակին:

ՀԱՅ ԿՅԱՆՔԸ ՔՍԱՆԹԻ ՄԵՋ

ՔՍԱՆԹԻ (Հռոմաստան).— Գաղութիս հայութունը շատ դժվարին կացության մատնված է, տիրող տնտեսական պայմաններու և անգործութեան պատճառով: Շատեր իրենց խանութները զոցած՝ անգործ կթափառին և օրվա հայր ապահովելու համար իրենց հագուստները և գուլքերը ծախու հանած են: Մխախտի բանվորները արդեն տարիներն ի վեր անգործութեան դատապարտված և իրենց ունեցածը շունեցածը ծախած են և հիմա օրվան ջուրոնով հացին դրամը անգամ անկարող են վճարելու:

Մյուս կողմեն ատելութունն ու արհամարհանքը հայ տարրին հանդեպ մեծ թափ տաացած է: Որով կրնաք երեւակայել մեր վիճակը:

Այլևս կյանքը անտանելի դարձած է մեզի համար և ժողովուրդը իր գոլութունը կքաշկուտե, աչքերը հառած ներգաղթին, որը միակ միջոցն է շինքը այս թշվառութենեն փրկելու համար:

ԹՂԹԱԿԻՅ

(«Լրաբեր» քիվ 7, 1946 թ.)

Պ Ա Ս Ր Ա Հ Ա Յ Գ Ա Ղ Ո Ւ Թ Ը

Կրավի թե երկրի երրորդական շրջանի հետանգույնին, երբ Եփրատ և Տիգրիս գետերը տակավին գոլութուն չունենին աշխարհի վրա, Իրաք համայն պատած էր օվկիանոսի ջուրով: Եվ սակայն ցամաքելով

ջուրերը, գոյացավ ցամաքը, և ապա առաջ եկան Եփրատ և Տիգրիս գետերը, որոնք հոսիլ սկսան Միջագետքով և այդ միջոցներուն հետզհետե ծնալ Պատարան և կաղմվեցալ Պարսից ծոցը:

Պատրային 60 մղոն գետն ի վեր հեռավորութեան վրա կգտնվի Կոռնե կոչված գլուղաքաղաքը, ուր Եփրատ և Տիգրիս գետերը կմիախառնվին և կկազմեն Շատտ յու Արաք գետը. ատենոք եղած է շատ ծաղկյալ ու բարգավաճ երկիր մը: Այս երկրին միշտ ակնարկված է, որ իբր թե եղած է պատմական դրախտը՝ Եդեմը, ուրտեղեն Աստված արտաքսեց Ադամն ու Եվան անհնազանդ գտնվելուն համար:

Այսօր հոն կանգուն կմնա միաստիկ ծառը, որ կհորջորջվի «Ժառ գիտութեան Բարվո և Զարի»: Աշխարհիս խուզարկուներ երբ պատահին Պատրա, շեն զլանար անպայման ալդ նշանավոր ավանդապատմական ծառը տեսնելու երթալ:

Պատրա քաղաքը շինվեցավ 637 թվին, երբ մահմետական հրոսակները Կատեպիեի պատեթրազմին վերջնական հարվածը տվին սասանյաններուն և հասան այստեղ:

Պատրան ունի միլիոնավոր արմավենիներ և բազմաթիվ կոնտրաձև մակուշկներ, և այս իսկ պատճառով եփրոպոսիք կոչած են զայն արևելյան Վենետիկ: Զմոռնանք նշելու, որ Պատրան ունի նույնպես նավթատիրներ: Ամառը օդը տաք է և հեղձուցիչ երբ արևելյան հով կփչի:

Մեր հայ գաղութը հավանականորեն խալափական տիրապետութենեն շատ տարիներ առաջ գոյություն ունեի Պատրայի մեջ, քանի որ ան վաճառականությամբ և հաղորդակցութեամբ կապված էր Պարսկաստանի և Հնդկաստանի հետ, երբ հայեր կճամբորդեին Հայաստանեն Միջագետք, Հնդկաստան և այլն, առևտրական նպատակով: Եվ սակայն մեր գաղութը որոշապես հաստատվեցավ Պատրայի մէջ 350—400 տարի առաջ:

Ժամանակին քաղաքին ամբողջ առևտուրը հայերուն ձեռքը եղած է և հայեր մեծ նպատիվ ու համբավ ունեին Պատրայի մեջ: Այն ատենները հայեր մոտ շորս հազար անձերե կբաղկանային: Ունեին շորս եկեղեցիներ— Ս. Աստուածածին, Ս. Ստեփաննոս և երկու ուրիշներ: Այսօր միայն Ս. Աստուածածինը գոյություն ունի: Հայերը լավ վարժարաններ ունեին և ընտիր հայկական մշակութային սնունդ կտրվեր աշակերտներու: Այն ժամանակները Պատրան Գահիրեի երկու անգամն էր մեծությամբ, և հայերը սովորութիւն ունեին ժուռ գալու

առավոտները և երեկոները դեպի հյուսիսային դուռը, որ շատ ծաղկյալ էր:

Ժամանակ մը անգլիական հյուպատոսի փոխանորդ, հանձնակատար, գործակատար և թարգման հայեր եղած են: Իսկ հայերուն առևտրական առագաստանավերը կխարսխեին շարան շարան հողանտական նավերու կողքին և աճա ալսպես Պատրայի բովանդակ վաճառականութեան մականը հայերուն ձեռքն էր: Հայեր ուրիշ առևտուրներե զատ մարգարիտի մեծ վաճառականութեան ալ կընեին: Այդ ատենները հայերը, որ Հայաստանեն, Թրքաստանեն և Պարսկաստանեն եկվորներ էին, տարածվեցան ամբողջ Պարսից ծոցը, մինչև Հնդկաստան և այլուր:

1773-ին Պատրայի մեջ կպատահի մաքեհի ժանտախտ մը, որ տակ ու վրա կընե բոլոր հայութեանն ալ, այնպես որ հայերուն մեծագուշն մասը կկոտորվի: Նախ քան թիվ մեկ համաշխարհային պատերազմը Պատրայի հայ համայնքը մոտ 120 անձերե կբաղկանար, սակայն այդ պատերազմեն հետո բարձրացավ թիվը զաղթականութեան բերումով և այսօր բովանդակ գաղութը ունի երկու հազար անձ:

Պատրայի հայերուն հնագուշն հիշատակարանը կկազմե խաչքար մը 1691 թվակառնով: Ս. Աստվածածին եկեղեցին կգտնվի բուն քաղաքին մեջ, որ քանիցս նորոգվեր է և վերջին անգամ ըլլալով ասկե քանի մը տարի առաջ հիմնովին բարենորոգվեցավ և բակն ալ բոլորովին ընդարձակվեցավ գաղութին մեծ բարերար և հայրենասեր Տ. Սիմոն Ղարիպյանի ծախքով: Եկեղեցիին կից է Ղարիպյան վարժարանը, բավական երկսեռ աշակերտութեամբ, որ ունի գոհացուցիչ և բավարար վիճակ: Կավանդվին հայերեն, արաբերեն և անգլերեն լեզուներ:

Իսկ Մարկիլ, որ քանի մը մղոն գետն ի վեր կգտնվի, կա հայ վարժարան մը՝ 200 երկսեռ աշակերտներով: Հոս ալ կավանդվի հայերեն, արաբերեն և անգլերեն լեզուներ: Ունի նույնպես բավարար վիճակ: Վարժարանի կողքին կգտնվի Հայ Սրահը: Եվրոպական և սոցալիստ պարահանրեաներ, ինչպես և դասախոսութեաններ հաճախ կպատահին Հայ Սրահին մեջ՝ առ ի օգնութեան վարժարանի: Ընդհանուր ազգային կյանքը լավ է և օրինակելի:

Վ. ՄԵԼՔՈՆՅԱՆ
(«Արախ» թիվ 980, 1946 թ.)

Ռ Ո Ւ Մ Ա Ն Ա Շ Ա Յ Կ Յ Ա Ն Ք

Ռումանիային կգրեն.
Մենք մեծ հետաքրքրությամբ կհետևեինք արտասահմանի հայ գաղութներու կյանքին

և կացութեան: Ռումանիան ալ Ֆրանսայի նման գրավուած երկիր մըն էր, առ տարբերութեամբ, որ Ֆրանսան թշնամիին կողմն

գրավուած էր, իսկ Ռուսմանիան՝ «բարեկամ»-ի կողմէ: Երկու պարագային ալ նախն անողորբ ու ծանր կրուակն էր. որ մեր կործանքին վրա կճանրանար: Գերմաններուն համար, առիկա փորձով հասկցալ ալս ժողովուրդը, բարեկամ թէ թշնամի միևնույնն է, երկրին հարստութիւնները կկողոպտեն և իրենց հակառակ կասկածովածները կընաջնջեն տեղ-վույն վրա կամ Պուրիեննիվարներու մեջ:

Անշուշտ, աշտուութեան ալս օրերուն կը փափաքէր հասկնալ թէ ի՛նչ եղանք և ի՛նչ ենք այժմ: Ահա այդ մասին է, որ վուզիմ տեղեկութիւններ տալ ձեզի:

Գրավման շրջանին մենք ալ դավաճաններուն հետքանք: Գերման զինքերուն աղմուկը արթնցոց դավաճանները, որոնց համար վերջապես հկած էր բառորդ դարե ի վեր սպասված օրը: Դրոն ու Նժդէճը սուբերնին քաշեցին ու զինվոր փնթեցին, «ազատարար» խումբեր կազմելու համար, բայց իրենցմե զատ ուրիշ դավաճաններ չդուան: Չորս թարգման-գործակից միայն կրցան որսալ մեր գաղութին մեջ: Պետք է բնել հպարտութեամբ որ մեր հայրենիքի մասին տարիներով մեր ամլած լուսաբանութիւնները ապարդիուն անցած չլլալը հայտնի եղալ, եթէ նկատի չառնենք Հ. Սիրուսիի Հիթլերի ծառայող «Արագ» թերթը:

Զինադադարեն անմիջապես հետո ինքնաբուխ կերպով Հայաստանյան ճակատ մը կազմվեցաւ, որուն շուրջը եկան բոլորվի տեղական հին ու նորակազմ բոլոր կազմակերպութիւնները:

Հայաստանյան ճակատը անխտիր ընդունեց մասնակցութիւն բերել տեղող բոլոր պարկեշտ հայրենասերները, ի՛նչ գուշնի ալ պատկանած ըլլաին: Այս հոծ ու զանգվածային մարմինը դուրաշարժ դարձնելու համար զանազան հատվածներու բաժնվեցաւ. 1) Մշակութային միութիւն, 2) Մարզական բաժին. որ ժիր ու կենսունակ է, 3) Բանվորական միութիւն, 4) Ուսանողական միութիւն, 5) «Եռմիտաս» և Հ. Ծ-ի երգչախումբ, 6) Առևտրականներու և արդյունաբերողներու հատված: Այս հատվածներուն լուրաբանչլուր իր կեդրոնական վարչութիւնն ունի, որ կապ կապահ Հ. Ծ-ի ընդհանուր կեդրոնի հետ:

Առևտրականներու բաժինը 23 օգոստոս 1944-են անմիջապես վերջ մեծ գումար մը հավաքելով անմիջապես Բաղրամյանի անվան հրատալային շարասլուսի ֆոնտին հանձնեց:

Իսկ գործարանատերերը անոնցմե ետ շմնացին: Առանց ժողովրդին դիմելու, իրենց մեջ բաւարար դրամ հավաքեցին Խ. Հայաս-

տանի մեջ լազրոյակ կերպասի գործարան մը հիմնելու համար: Հարկ եղած հիմնադրամը արդեն պատրաստ ունին:

Առևտրականներու հատվածը այժմ նոր հանգանակութեան մը ձեռնարկած է Ատաղ-ձի և Ներգաղթի հիմնադրամի համար 100—150 վագոն առաղձ դրկելու համար Հայաստան: Բանվորները թէ դրամով և թէ ձրի աշխատանքով մասնակցեցան ալս հանդանակութեան:

Այս հանգանակութիւնը շատ տեղին է, որովհետեւ շինարարութեան և ներգաղթ կաթնեղբայրներ են:

Հայաստանյան ճակատի մասնաճյուղերն զատ, Գաղթային Տեղական Վարչութիւն մըն ալ կազմված է, որ սերտորեն կգործակցի ճակատին հետ, ներգաղթին և գաղութին ներքին կյանքին վերաբերյալ գործերը վարելով ամենուն գոհունակութեան տվող ձեւով:

Ստեղծված ալս նոր կացութիւնը, սակայն գաղութին ալսնդական կազմակերպութիւնները սվելորդ նկատելու չձգեցաւ: Եկեղեցիի թաղականութիւն ու դպրոցի հոգաբարձութիւն իրենց աշխատանքները անխափան կշարունակին նոր եռանդով:

21 փետր. 1946-ին Հ. Ծ.-ը և մյուս կազմակերպութիւնները Կարմիր Բանակին ի պատիվ արեւելյան պարահանդես սարքեցին քաղաքին ամենամեծ սրահին մեջ, ուր ներկա եղան Խորհրդային քեսպանը և բանակի ամենաբարձրաստիճան սպաները, ամերիկյան, ուսմանական ներկայացուցիչները:

Դրամական ամբողջ հասուցիքը, որ գոհացուցիչ էր, Պուրքոշի գույգ հայկական վարժարաններուն հատկացվեցաւ:

Ահա մեր գաղութին կյանքեն քանի մը դրվագներ և ուրվանկար տվի, բայց շեմ կարծեր, որ ամբողջ կացութիւնը կրցաներկայացնել: Դեպքերու թվումը չէ որ գաղափար պիտի տա ձեզի, մեր խանդավառութեան և հույսերուն մասին:

Հոս մենք շատ մոտ ենք Հայաստանի, ծով մըն է միայն, որ կբաժնէ մեզ: Մեր երկրի լուրերը օրը օրին կատանանք: Կիմանանք որ ամբողջ Հայաստանը մեծ ու թանկագին հյուսք մը ընդունելու պատրաստվողի մը պես եռուզնի մեջ է: Տուներ կշինվին ու կավարտին, պատրաստութիւններ կտեսնվին հեռուեն եկող կարտուակեղ դարիպ զավակը ընդունելու համար:

Մեր գաղութին խանդավառութիւնը անսահման է: Տուս, դպի Տուս, Հայրենի Տուս — ահա՛ ամենուս կարգախոսը, ուր վաղը իրականութիւն պիտի դառնա:

(«Ժողովուրդի ձայն» թիվ 1143, 1946 թ.)